

4773

282

7-62

4h 57h 4m

1862

282
7-62

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Պ Ի Ո Ս Ի

ԱՍՏՈՒԱԺԵՂԷՆ ՏԵՍԶՈՒԹԵԱՄԲ

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Պ Ե Տ Ի Թ.

ԹՈՒՂԹ ՀՐԶԱԲԵՐԱԿԱՆ

ԱՌ ԱՄԵՆԱՅՆ

ՊԸՏՐԻԱՐՔՍ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

ԵԿԵՂԵՅԵԱՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԺԻՍԻ

ՈՐԲԻ ՀՆՈՐՀՍ ԵՒ ԻՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅ ԻՑԵՆ

Handwritten signature or mark.



Ի ՎԲԵՆՆԱ

Ի ՏՊԸՐԱՆԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

1862

001



24734-61

Առ Մեծարգոյ Եղբարս
Պատրիարքս, Արքեպիսկոպոսոսն ևւ Եպիսկոպոսոսն
Եկեղեցեաց Արեւելեան ծիսի,
որք ի շնորհս ևւ ի հաղորդութեան
Առաքելական Աթոռոյ իցեն

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Թ.



ՄԵԺԱՐԳՈՅ ԵՂԵԱՐՔ

ՈՂՋՈՅՆ ԵՒ ԸՌԸՔԵԼԸԿԸՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Մարդասէր Տէր՝ Քրիստոս փրկիչ ազգի մարդկան՝ Միաժին Արդի Եստուծոյ՝ կամեցեալ, որպէս յայտնի իսկ է Ձեզ, Մեծարգոյ Եղբարք, ապրեցուցանել զամենայն մարդ ի գերութենէ սատանայի եւ ի մեղացն լծոյ, եւ կոչել զնոսա ի խաւարէ յիւր սքանչելի լոյսն եւ փրկել, ջնջեաց զձեռագիր հրամանացն, որ կայր մեզ հակառակ, եւ բեւեռեալ ընդ խաչափայտին, զկաթողիկէ Եկեղեցի, զոր ստացաւ արեամբ իւրով, հաստատեաց եզ իբրեւ գտողն մի Աստուծոյ կենդանւոյ¹, իբրեւ զարքայութիւն երկնից², եւ իբրեւ զքաղաք, որ ի վերայ շերին կայցէ³, կամ իբրեւ զգահիթ մի ոչխարաց⁴, եւ մարմին մի միով հոգւով հաստեալ եւ կենդանի, միով հաւատով, յուսով, սիրով, եւ նովին միով յօդիւ խորհրդոց, կրօնից եւ վարդապետութեան յօդեալ եւ պատշաճեալ⁵, եւ կացոյց տեսուչս, զորս ինքն անուանեաց եւ ընտրեաց. եւ իբրեւ այսպէս կարգեալ յարդարեաց զեկեղեցի, ետ վճիռ,

¹ Ը. Տիմոթ. Գ.

³ Մատթ. Ե.

² Մատթ. Ժ.Գ. եւ յայլ բազում տեղիս.

⁴ Յովհ. Ժ.

⁵ Եփես. Գ. եւ այլուր.

Թէ կացցէ սա մինչեւ ի կատարած կործանման
աշխարհի, եւ ժողովեացէ ի ծոց իւր զազգս եւ
զժողովուրդս համօրէն տիեզերաց, զի ամենեցուն
նոցա զնորա զաստուածեղէն կրօնան եւ զշնորհս
ընկալեալ՝ պահիցեն զնոսա ցյետին շունչ կենաց
իւրեանց, եւ զփրկութիւն եւ զփառս յաւիտե-
նականս ժառանգեացեն: Աւ զի այս միութիւն
հաւատոց եւ վարդապետութեան կացցէ միշտ
յեկեղեցւոյ իւրում, յամենեցունց՝ զմին Պետրոս
ընտրեաց, եւ զնա իշխան առաքելոց, իւր փոխա-
նորդ, եւ իւրոյ անյաղթական եկեղեցւոյ հիմն եւ
գլուխ կարգեաց, որպէս զի աստիճանաւն պատուոյ
եւ ամենայն առաւելութեամբ գլխաւորական ճո-
խութեանն, եւ իշխանութեան եւ իրաւաբանու-
թեան ի վերայ այլոցն ամենեցուն կացեալ՝ հո-
վուեացէ զոշխարս եւ զգառինս, հաստատեացէ զեղ-
բարս, ինամ կալցի եւ առաջնորդեացէ համօրէն
եկեղեցւոյ: Այլ զի կամեցաւ եւս Քրիստոս, զի
այս մի եւ անարատ եկեղեցի իւր կացցէ եւ մնաս-
ցէ մինչեւ ի կատարած աշխարհի, եւ հրամայեաց
իսկ՝ Թէ պահեսցին ինմա մի հաւատք, մի վարդա-
պետութիւն եւ օրինակ վարչութեան, նմին իրի
իսկ որ ինչ առաւելութիւն արժանապատուու-
թեան, իշխանութեան եւ իրաւաբանութեան, եւ
լրութիւն հաւատոց եւ հաստատութիւն Պետրոսի
շնորհեցաւ, նոյն ամենեւին եւ յաջորդաց Պետրո-
սի Քահանայապետաց Հռոմայ աւանդեցաւ, որք
ի նորին Պետրոսի յաթոռն Հռոմայ նստին, եւ
որոց՝ յանձին երանելոյ Առաքելապետին ի Քրիս-
տոսէ հեռունէ բարձրագոյն տեսչութիւն տէրու-
նական հօտին աստուածապէս շնորհեցաւ, եւ
բարձրագոյն համօրէն եկեղեցւոյ վարչութիւն հա-
ւատացաւ: Այլ Ձեզ մանաւանդ, Սեծարգոյ եղ-
բարք, յայտ է եւ ճշմարտիւ գիտէք, եթէ որպէս

մերոց աստուածեղէն կրօնից հրամանակարդ վարդապետութիւն ի միաշունչ եւ ի մշտնջենաւոր միաբանութենէ մտաց եւ բանից Սիւնհոգոսաց եւ Հարց՝ միշտ քարոզեցաւ, պատսպարեցաւ, եւ յաճախագոյնս կրկնեալ հաստատեցաւ: Քանզի ոչ խորշեցան նոքա երբեք յուսուցանելոյ թէ «մի է Մատուած, մի՛ Քրիստոս, մի՛ Եկեղեցի եւ մի՛ Մթոռ, որ Տեառն ձայնիւ ի վերայ Պետրոսի հիմնեցաւ¹, յորոյ վերայ իբրեւ ի վերայ ժայռի եւ վիմի հաստատնոյ բնաւ եւ ամենայն իսկ շինուած քրիստոնէական յօրինուածութեան յաստուածուստ կանգնեցաւ²: Քանզի Մթոռս այս Պետրոսի՝ եւ անուանեցաւ միշտ եւ եկաց, որ է միայն եւ առաջին ի ձրիցն³, եւ գահերէց գլխաւորութեամբն ընդ ամենայն տիեզերս պայծառանայ⁴, արմատ եւ արգանդ է, ուստի քահանայական միութիւնն ծագէ⁵, եւ ամենայն եկեղեցեաց՝ ոչ միայն գլուխ, այլ եւ մայր եւ ուսուցիչ է⁶, մայրաքաղաք աստուածապաշտութեան, յորում կայ քրիստոնէական կրօնից ողջ եւ կատարեալ հաստատութիւն⁷, եւ յորում Եռաքելական Մթոռոյ գլխաւորութիւն միշտ զօրաւոր եւ կենդանի է⁸, յեցեալ է նա ի վէմն յայն, զոր ոչ կարեն յաղթահարել դրունք դժոխոց հպարտացեալք⁹, յոր Եռաքեալքն զամենայն վարդապետութիւն արեամբ իւրեանց հեղին¹⁰, յորմէ առ ամենեւին մեծարոյ հաղորդութեանն իրաւունք բաշխին¹¹, որում ամենայն

¹ Ս. Կիպրիան. Թուղթ Խ.

² Ս. Կիւրեղ Աղեքսանդր. Ի Յովհ. Գիլք Բ. ԳԼ. 42.

³ Ս. Ոսկ. Միլ. Գիլք Բ. Ընդ. Պար.

⁴ Ժողով Նիկիայ Բ. Գործք. 2.

⁵ Ս. Կիպրիանոս Թուղթ 15. եւ 55.

⁶ Պեղադ. Բ. Թղ. Ա. առ Երեւ. եւ Եպիսկ. եւ Ժող. Տրիդենտ. Նիստ է. վասն Մկրտ. Կան. 3.

⁷ Թուղթ Սիւնհոգ. Յովհ. Կոստանդ. առ Որմիղդ. Քահանայապ. եւ Սող. Պատ. Գիլք Գ. ԳԼ. 8.

⁸ Ս. Աւգոստին. Թուղթ 162.

⁹ Ս. Աւգոստ. Ի Սաղմ. Ընդդ. Գոնատ.

¹⁰ Տերտուլ. վասն Կանխադր. ԳԼ. 36.

¹¹ Ս. Ամբրոսիոս Թուղթ 12 առ Գամառ.

«Հնազանդութիւն եւ պատիւ պարտ է¹, զոր եթէ
 «Թողու ոք՝ ընդունայն է յոյս նորա, թէ յեկե-
 «ղեցւոջ իցէ², եւ եթէ արտաքոյ սորա զգառնն ոք
 «ուտիցէ՝ օտար է³: Եւ դարձեալ՝ Պետրոս, որ
 «Ըթոռ իւրում կեայ եւ գահերէց նստի⁴, որոց
 «խնդրենն զհաւատոց ճշմարտութիւն ընծայէ,
 «Պետրոս, որ մինչեւ ցայժմ եւ միշտ ի յաջորդս
 «իւր կեայ եւ առնէ դատաստան⁵, նա ինքն ի
 «ձեռն Լեւոնի խօսեցաւ⁶, Քահանայապետ Հռո-
 «մայ որ ունի Վլեսաւորութիւն ի վերայ համօրէն
 «տիեզերաց, Յաջորդ է Երանելոյն Պետրոսի՝ իշ-
 «խանի Եռաքելոց, ճշմարիտ Փոխանորդ Քրիս-
 «տոսի, Վլուխ ընդհանուր Եկեղեցւոյ եւ ամե-
 «նայն քրիստոնէից Հայր եւ վարդապետ⁷», Եւ
 սոքիկ եւ այլ գրեթէ անհամար բանք հանգոյն
 սոցին ի լուսաւոր վկայիցն առեալ, ուսուցանեն
 եւ յայտնագոյնս եւ պայծառագոյնս եւս ցուցա-
 նեն, թէ որպիսի հաւատովք, կրօնիւք, մեծարա-
 նօք եւ հնազանդութեամբ Եռաքելական Ըթո-
 ոյս եւ Քահանայապետին Հռոմայ անապ պարտ
 իցէ ամենեցուն, որ միայնոյ, ճշմարտի, սրբոյ Եկե-
 ղեցւոյ Քրիստոսի հաղորդակից լինել կամիցին,
 զի յաւիտենական փրկութեանն հասանիցեն:

Իսկ սրբոց եւ օրինաւոր ծիսից բազմապա-
 տիկ այլակերպութիւնք՝ ոչ միայն փաստ ինչ մի-
 ութեան կաթողիկէ Եկեղեցւոյ չգործեն, այլ ա-
 ռաւելուն իսկ զպատիւ, զփառս, զվայելութիւն
 եւ զպայծառութիւն նորին Եկեղեցւոյ: Չէ ինչ
 ծածկեալ յումեքէ ի ձէնջ, Մեծարգոյ Եղբարք,
 եթէ որպէս ոմանք զանգագոյշս եւ առաւել եւս

¹ Ժող. Եփես. Գործք 4.

⁵ Ժող. Եփես. Գործք 3.

² Ս. Երպրիան. վասն միութ. Եկեղ.

⁶ Ժող. Քաղկեդ. Գործք 2.

³ Ս. Յերոնիմ. Թղ. 51. առ Գամաա.

⁷ Ժող. Փլսրենտ. Ի Հրամանագ.

⁴ Ս. Պետր. Ոսկեխօս Թուղթ առ
 Եւտիք.

միաբ. Յունաց.

զտգէտս պատրել ջանան՝ չարախօս կացեալ զՆ-
ռաքելական Նթոռոյս, եթէ յորժամ զայլադանդ
Նրեւելեայս ի կաթողիկէ հաւատս ընկալցի, զսեպ-
հական ծէսս իւրեանց թողուլ հրամայիցէ եւ
առնուլ զՆատինական Նկեղեցւոյն: Թէ որչափ
հեռի ի ճշմարտութենէ եւ պատիր բանքս իցեն,
յայտնի իսկ ցուցանեն եւ վկայեն Մերոց Նախ-
նեաց սահմանադրութիւնք եւ թուղթք առաքե-
լականք՝ տուեալք վասն իրաց Նկեղեցեաց Նրեւ-
ելից, որովք Նոքա ոչ միայն մեծաւ հաստատու-
թեամբ յայտ արարին, եթէ զայսպիսի ինչ բնաւ
եւ ոչ իսկ խորհեալ իցէ նոցա, այլ մանաւանդ եւ
հաստատեցին իսկ, եթէ կամին զի ողջ անարատ
պահեսցին ծէսք Նկեղեցեաց Նրեւելից, յորս ոչ
ինչ մոլորութիւն ընդդէմ կաթողիկէ հաւատոյ եւ
բարոյիցն զգաստութեան սպրդեալ իցէ: Այսոցիկ
լուսաւորագոյն եւ յաճախ յայտարարութեանց
Մերոց Նախնեաց Քահանայապետաց Հռոմայ՝
զոյգ հաւասար են եւ գործք հնագոյնք եւ նորոց
ժամանակաց, որպէս զի չկարիցէ ոք երբեք ասել,
եթէ Նռաքելական Նթոռոս պատուէր տայցէ Ն-
ռաջնորդաց Նկեղեցեաց, կամ կղերականաց եւ
կամ արեւելեան ժողովրդոց՝ որ ի կաթողիկէ
միութիւն դառնայցեն, փոխել զօրինաւոր ծէսս
իւրեանց: Այժմ իսկ համօրէն ամենայն քաղաքն
Սոստանդինուպոլսեցւոց ետես, եթէ զիարդ Մե-
ծարգոյ Նղբայր՝ Մելետիոս Ղրամենասացւոց Աբբ-
եպիսկոպոս, մեծաւ մխիթարութեամբ սրտից
Մերոց եւ յուրախութիւն արանց բարեաց ի ծոց
կաթողիկէ Նկեղեցւոյ ընկալեալ՝ սեպհական ծի-
սիւն մեծապայծառ փառաւորութեամբք եւ շքով
զաստուածեղէն խորհուրդս ի մէջ բազմութեան
ժողովրդեանն կատարէր: Այլ արդ՝ Մեծարգոյ
Նղբարք, Ձերոյ հովուական փութոյ եւ խնամոց

գործ իցէ չղաղարել երբեք ի խրատելոյ զկղերա-
կանս վիճակացդ, զի ամենայն պատշաճաւորն մի-
ջնորդօք փութասցին զչարախօսութիւն չարա-
խօսացն նշաւակեալ յանդիմանել, որովք զան-
զգոյշն մոլորեցուցանել կամին, եւ ի նախանձ եւ
յատելութիւն ընդդէմ առաքելական Աթոռոյս
ջանան գրգռել զնոսա:

Այլ Մէք որ ըստ ծածուկ խորհրդոյն Աս-
տուծոյ յայս Աթոռ Պետրոսի կարգեալ ի բար-
ձրագոյն վարչութիւն համօրէն Նկեղեցւոյ Քրիս-
տոսի ամբարձեալս եմք, զամենայն յոյս եւ զակն-
կալութիւն Մեր ի Քրիստոս Յիսուս եղեալ
զգործ Առաքելական պաշտաման Մերոյ կատարել
ջանամք, որպէս իսկ հանապազորդ պէտք եւ հոգք
ամենայն Նկեղեցեաց պահանջեն ի Մէնջ: Քանզի
յաստուածեղէն օգնականութիւն Այնորիկ ապա-
ւինեալք, զորոյ զգործ փոխանորդութեանն Մե-
րով անարժանութեամբ յերկրի աստ կատարեմք,
որ եւ ասացն իսկ, եթէ ահա ես ընդ Ձեզ եմ զա-
մենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի, եւ
հաստատեաց, եթէ դրունք դժոխոց զեկեղեցի իմ
մի յաղթահարեսցեն, բնաւ եւ յամենայն իսկ յա-
նօրէն ի տաճարակողոպուտ դաւաճանութեանց
անտի, ի հնարից եւ ի բռնութեանց, որովք արք
թշնամիք յանօրէնութեան ժամանակացս այսո-
ցիկ զկաթողիկէ կրօնս, եթէ հնար իցէ երբեք,
հիմն ի վեր կործանել ջանան, ոչ զանգիտեցաք,
եւ չղաղարիմք եւս ի հոգալոյ զհոգեւորն բարու-
թենէ եւ զփրկութենէ ամենայն ազգաց: Օհ
սէրն Քրիստոսի ստիպէ զՄեզ, եւ Մեզ լաւագունի
իմիք չմարթի լինել, քան թէ վաստակիցեմք եւ
տքնիցիմք եւ հոգայցեմք զի ամենայն ազգք ի մի
միաբանութիւն հաւատոց եկեսցեն, աճեցունք զի-
ստութեամբն Աստուծոյ եւ հեառն մերոյ Յիսուսի

Քրիստոսի «որ է ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ
«կեանք, այն ինքն է՝ ճանապարհ սրբական վարուց,
«ճշմարտութիւն աստուածեղէն վարդապետու-
«թեան, եւ կեանք յաւիտենական երանութեան»¹»:

Եւ չէ ինչ ծածկեալ ի Չէնջ, Մեծարգոյ
Եղբարք, եթէ որով սիրով եւ որպիսի հանապա-
զորդ ճգամբ զգութ հայրական խնամոց Մերոց ի
սկզբանէ անտի բարձրագոյն Քահանայապետու-
թեան Մերոյ տարածեցաք ի վերայ ընտրելոյ մա-
սինդ այդորիկ Տէրունական Հօտին, որ Չերում
տեսչութեան յանձն է. եւ արդ իսկ ի նորոյ Թղթ-
թոյ մերմէ՝ որ Մատանեաւ ձկնորսի կնքեալ է եւ
ի Օգերորդ աւուր Յունուարիոս Ամենան հրատա-
րակեալ, քաջ իսկ ի միտ առեալ իցէք զանձուկն
Մեր եւ զցանկութիւն սրտի վասն բարութեան,
օգտի եւ բարգաւաճանաց այդոցիկ Արեւելեան
Եկեղեցեաց: Քանզի Թղթոմն այնուիկ յողով
մի առանձինն՝ ի յողովոյ անտի տարածման Հա-
ւատոյ գումարեալ կարգեցաք, որ նմին իսկ յողո-
վոյ տարածման Հաւատոյ՝ ի բազում եւ ի ծանունց
վաստակոց գրաւելոյ լիցի ի մեծ օգնականութիւն,
եւ ի գործն, զոր յողովն տարածման Հաւատոյ
մինչեւ ցայժմ մեծաւ ճգամբ եւ մեծաւ գովես-
տիւք կատարէր, այնպէս պարապիցի, զի զամե-
նայն իրս Արեւելեան Եկեղեցեաց ինքնին միայն
վարիցէ, եւ փութասցի ի կատարումն: Եւ յի-
րաւի իսկ յուսոմն այնուիկ մխիթարիմք, զի Տեառն
օգնականութեամբ ի մերոց աստի խորհրդոց եւ ի
խնամոց յամենայն ազգս արեւելից առաւելութիւն
հոգեւոր բարեաց գործիցի: Քանզի հաստատուն
է ակնկալութիւն Մեր, եթէ այս առանձինն յողով,
զոր նորագոյն կարգեալ հաստատեցաք, յորժամ
զգործովք ձերովք զբաղնուցու, ոչինչ ի հնարիցն

¹ Ս. Լեւոն խօսք Բ. վասն Յարութեան Տեառն:

Թողցէ, որպէս ցանկամբս, զոր ոչ հնարիցէ վասն
զկաթողիկէ միութիւնն յառաջ վարելոյ, զյաջո-
ղութիւն Եկեղեցեաց ձերոց առաւելոյ եւ ամբող-
ջութեան օրինաւոր ծիսից ձերոց պաշտպան լի-
նելոյ, եւ բնաւ ամենայն իրօք հոգեւորն օգտի
հաւատացելոց օգնական եւ զօրավիգն լինելոյ:

Բայց եւ այնպէս՝ զի Դողովս այս զպաշտօնն
զոր ընկալաւ ի Մէնջ, ամենայն իմաստութեամբ
եւ փութով կատարիցէ, եւ վաստակք նորա եւ
ճիգն յառաւել պայծառութիւն Եկեղեցեացդ
լինիցին, հարկ իսկ է, զի ճշդիւ գտակաւ զհոգեւոր
պէտս Արեւելից ազգաց զիտասցէ, առ ի զպատ-
շաճական դարմանան մատուցանելոյ: Այլ քանզի,
Մեծարգոյ Եղբարք, Ձեզ առաւելապէս յայտ են
պայմանք եւ հանգամանք հօտին, որ ձերոյ խնա-
մոցդ հաւատացեալ է, ինքնին իսկ յիմաստութեան
ձերում ի միտ առնուցուք, եթէ կարեւորագոյն
պէտք են, զի զամենայն իրաց Եկեղեցեացդ եւ
հօտի ձերոյ վաղվաղակի իսկ, որչափ ինչ մարթ-
իցէ, զՄեզ տեղեկագոյնս առնել հաճեսձիք, եւ
մանր եւ ստուգագոյն տեղեկութիւնս զորպիսու-
թենէ վիճակաց Ձերոց առաքիցէք, զամենայն՝ որ
ինչ առ իւրաքանչիւր վիճակսդ հայիցի՝ մի ըստ
միոջէ յայտնեալ, որպէս զի կարիցեմք հոգալ զպի-
տոյս հաւատացելոց՝ որ ի վիճակսդ յայդոսիկ բնա-
կեն: Յիրաւի իսկ լիցի Մեզ ի մեծ մխիթարու-
թիւն, եթէ իւրաքանչիւր ոք ի Ձէնջ, Մեծարգոյ
Եղբարք, զամենայն ինչ զիւրոյ սեպհական վիճա-
կին հաւաստեալ պատմեալ ծանուցէ Մեզ, եթէ
որչափ բազմութիւն հաւատացելոցն իցէ ի վիճա-
կին յայնմիկ, որչափ կղերականք՝ որ գործովք
պաշտամանն իւրեանց հաւատացելոցն սպաս հար-
կանիցեն, որպիսի ինչ հանգամանք հաւատացե-
լոցն իցեն եւ ի հաւատս եւ ի զգաստութեան վա-

րուց, զոր վարդապետութիւն կղերականք ունիցին, զիարդ դաստիարակիցին, որով օրինակաւ ժողովուրդն ի սրբական կրօնս մեր եւ ի բարոյից հրահանգս կրթիցի, եւ որով իւիք մարթ իցէ ժողովրդեանն յաստուածպաշտութեան անդ եւ ի բարուցն լաւութեան օրրատօրէ առաւելուլ եւ յառաջադէմն ընթանալ: Նոյնգունակ ցանկամբ գիտել զհանգամանս դպրոցաց ձերոց, եւ թէ որպէս ցանգորդեն ի նոսին մանկտին: Այլ քանզի բարւոք իսկ գիտէք, Մեծարգոյ Նղբարք, եթէ ամենայն ակնկալութիւն իրաց սրբոց եւ բարւոյ հասարակաց եղեալ է յուղիղ, ի փրկարար եւ ի կրօնական կրթութեան մանկանց, նմին իրի կարեւոր իսկ հարկ է, հանապազորդել նոցա ի տղայական տիոց յուղղափառ դպրոցս, զի անդ զճշմարտութիւն աստուածեղէն կրօնիցս, եւ զնորա պատուիրանսն ուսեալք ժրութեամբ՝ հեռացին ի վտանգացն, եւ մի ապականագործ սկզբամբք թիւրեացին միտք նոցա փափուկք: Այլ զայնու եւս մի զանց արասջիք յայտնել Մեզ, թէ կարօտիցէք մատենից, եւ ցուցջիք միանգամայն, եթէ զորպիսի մատեանս կարեւոր համարիցիք վասն զկղերականս յուսումն վարդապետութեան կրթելոյ, զժողովուրդն ուսուցանելոյ, զայլակրօնիցն վարդապետութիւնս մերթելոյ եւ զաստուածպաշտութիւն ժողովրդեանն ի յառաջադիմութիւն ածելոյ: Առաք դարձեալ, եթէ ի տեղիս տեղիս ի կիր արկանիցին պատարագամատոյցք եւ ծիսարանք, յորս կան մոլորութիւնք ինչ եւ կամ ըստ կամս փոփոխութիւնք ի ներքս մուծեալ իցեն, Ձեզ անկ է յայտնել Մեզ, եթէ զոր մատեանս ունիցիք, եւ դարձեալ ցուցանել եթէ մատեանքն այնոքիկ եղեն երբեք հաւանեալք Ռուսքելական Աթոռոյս, եւ կամ եթէ համարիցիք, թէ իցեն ի նոսա մոլո-

բութիւնք յուղղել, կամ թէ իցեն ձեր տարակոյսք
ինչ ի լուծանել, եւ կամ գուցեն չար ինչ սովորու-
թիւնք կամ զեղծմունք ի բառնալ: Առաւել եւս ցան-
կամք լսել ի Չէնջ, թէ որպէս յառաջանայցէ ի վի-
ճակս Չեր սուրբ կաթողիկէ միութիւնն, զինչ այնմ
խափան լինիցի, եւ որովք պատշաճական միջնոր-
դօք զայն ի բաց բառնալ մարթ իցէ, որպէս զի
միութիւնս այս հանապազ առաւելուցու եւ աճիցէ:

Տեսանէք արդ, Մեծարգոյ Աղբարք, թէ որ-
պիսի սիրով եւ որչափ զթով փութամք ճեպիմք
խնամել զարեւելեան Ակեղեցիսդ, եւ առաւել եւս
փափաքիմք զի յարեւելեան ազգսդ հաւատք մեր
սուրբ, կրօնք եւ աստուածապաշտութիւն աճիցին
եւ զօրացեալ պայծառացին: Աստահ իսկ եմք,
եթէ եւ Ղուք ըստ պարտուց պաշտաման Ապիս-
կոպոսութեան Չերոյ եւ հովուական եռանդեանն
յայն փութասջիք եւ զայն խորհեաջիք, զի աս-
տուածեղէն կրօնիցս պաշտպան լինիցիք եւ տարա-
ծիցէք եւ փրկութեան հօտի ձերոյ խնամ կալ-
ջիք: Այլ քանզի յողբոց եւ յարտասուաց ժամա-
նակիս՝ այր թշնամի ոչ դադարի ի սերմանելոյ
զորումն ի տէրունական ազարակի ժանդագործ
մատենիւքն եւ օրագրովք եւ անհեղեղ եւ ինքնա-
կամ կարծեացն կցկցանօք, որք կաթողիկէ հա-
ւատոց եւ վարդապետութեան ընդ հակառակս
իցեն, ինքնին իսկ ի միտ առնուք, եթէ որով
ճգամք եւ արթնութեամք եւ հաստատութեամք
պարտ է Չեզ վաստակել եւ հսկել, զի զհաւատա-
ցեալսդ ի թիւնալից արօտոյ անտի ի բաց մերժի-
ցէք, եւ վարիցէք զնոսա յարօտս փրկութեան
արբուցանել զնոսա վարդապետութեամք կաթո-
ղիկէ եկեղեցւոյ: Աւ զի այսմ հեշտեաւ մարթայ-
ցէք հասանել, Մեծարգոյ Աղբարք, մի անփոյթ
արասջիք յարծարծելոյ զեռանդն երիցանց կար-

դելոց յառաջնորդութիւն հաւատացելոց, զի ժրացեալ նոցա ի պաշտամանն իւրեանց՝ մի խորշեսցին ընաւ յաւետարանելոյ զաւետարանն Աստուծոյ իմաստնոց եւ անմտաց, եւ ամենայն իրօք սրբովք ձեռնառու լիցին հաւատացելոյ ռամկին, որ ընդ նոցա խնամակալութեամբն իցէ, եւ փութասցին առաւել եւս սիրով եւ երկայնմտութեամբ յուսումն կաթողիկէ հաւատոց եւ ի հրահանգս բարոյից վարժել զմանկունս եւ զշինականս, եւ զամենեսին մեծաւ հաստատութեամբ յորդորեսցեն անշարժ կալ յողջմտութեան վարդապետութեանն, զի մի իցեն խռովեալք եւ տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան: Խրատեսցիք ցանդ զերիցունս վիճակացդ, զի յուշ լիցի նոցա պաշտօնն զոր ընկալան ի Տեառնէ, զի զայն ժրութեամբ կատարեսցեն, լիցին օրինակք ամենայն առաքիւնութեանց առաջի ժողովրդեանն, աղօթից ստէպ կացցեն, յաստուածապաշտութեան զանձինս կրթութեսցեն, եւ յամենայն զօրութենէ վաստակեսցին եւ սկեսցեն յաւիտենիցն փրկութեան հաւատացելոց: Եւ զի դարձեալ կարող լինիջիք ունել մշակս ժիրս եւ իմաստունս, որք ի դէպ ժամանակի յայգւոջ Տեառն գործակիցք Ձեզ լինիցին, զամենայն հնարս հնարեսցիք եւ յայն փութասցիք ամենայն խորհրդով եւ հանձարով, Մեծարգոյ Եղբարք, զի մանկագոյն Աղերականք յառաջին տիոց անտի ընդ իմաստուն վարդապետօք սնեալք յաստուածապաշտութեան՝ եկեղեցւոյ հարազատ հոգւոյն զարգասցին, եւ ժրութեամբ կրթեսցին ի գիտութիւնս եւ ի հրահանգս, մանաւանդ յաստուածեղէնս եւ յանարատս ի մոլորութենէ: Յիշաւի չեմք անտեղեակք, Մեծարգոյ Եղբարք, եթէ բազում եւ անհնարին դժուարութիւնք ընդ առաջ ելանիցեն Ձեզ ի կատարել զհովուական

պաշտօնդ : Այլ զօրացարուք Տերամբ եւ կարողութեամբ զօրութեան նորա . յուշ լիցի Չեզ եթէ վասն Քրիստոսի պատգամաւորիք , որ եղ զանձն ի վերայ ոչխարաց իւրոց , եւ մեզ եթող օրինակ զի զհետ երթայցեմք հետոց նորա :

Աւ զայն եւս չեք ոք՝ որ ոչ գիտասցէ , եթէ կրօնաւորական ժողովք միանձանց յորպիսի օգուտ եւ որքան ի զարդ կաթողիկէ Ակեղեցւոյ յարեւելս եղեն : Քանզի սոքա անարատութեամբ վարուց , զգօնութեամբ բարոյից եւ կրօնաւորական հրահանգացն գովութեամբ պայծառացեալք՝ ջանային լինել օրինակ բարեացն գործոց հաւատացելոց , ուսուցանել զմանկտին , մշակել զգիտութիւնս եւ զհրահանգս եւ գործակից եւ զօրավիզն օգնականութեան հոգեւոր առաջնորդացն լինել : Սակայն ի փոփոխել յեղափոխ եղծագործ ժամանակաց եւ իրաց , նուիրական յողովքս այսոքիկ , կարի քաջ երախտաւորք քրիստոնէական եւ քաղաքական կարգաց , ի տեղիս տեղիս ի սեպհական Աւիստի հրահանգացն խոտորեցան , եւ կամ բնաւ իսկ բարձան ի միջոյ : Այլ քանզի շահեկանութիւն մեծ է սրբոց կրօնից թէ յարիցեն միւսանգամ նուիրական յողովքս այսոքիկ ուր ջնջեցանն , եւ նախնի լուսաւորութեամբն փայլեցեն ի մէջ արեւելից ազգացն , նմին իրի խնդրեմք ի Չէնջ յայտնել Մեզ , թէ զինչ խորհիցիք զիրացս եւ թէ որով օրինակաւ մարթ եւ պատշաճ իցէ զնուիրական յողովսդ միւսանգամ նորոգել :

Աստահ եմք ի Չեզ , Մեծարգոյ Աղբարք , եթէ ոչ միայն զայսոսիկ , զոր ցանկամբս եւ խնդրեմք ի Չէնջ , մտադիւրագոյնս կատարել փութայցէք , այլ մեծաւ յօժարութեամբ իսկ յայտնիցէք Մեզ եւ զայն ամենայն՝ զոր ինչ պարտ եւ պատշաճ համարիցիք ի գործել յօգուտ սրբոց

կրօնիցս, կղերականաց եւ հաւատացելոց ի գա-
ւառսդ յայդոսիկ: Եւ քանզի՝ ի Շրջաբերական
Թղթոյ անտի կարդինալի՝ գահերիցու Սիւնհոդոսի
անուանեալ Դողովոյ մերոյ՝ ծանեայք, եթէ քա-
նի հեշտական իցէ Մեզ, Մեծարգոյ Եղբարց
Նուիրական Նաաջնորդաց առաջակայութիւն ի
մեծաշուք հանդիսի, զոր ի մօտոյ՝ յաւուր Պեն-
տակոստէի կատարելոց եմք Տեառն օգնականու-
թեամբ՝ ի կարգել զբազումս յերանելեաց ի Թիւս
Սրբոց, ակն ունիմք ի պատեհ ժամուն յայնմիկ,
եթէ Թոյլ տայցեն իրք վիճակացդ, տեսանել ըզ-
Չեզ առնթերակայս, փարել զՉեօք սիրով, եւ ի
Չէնջ իսկ զձերոց վիճակացդ լսել զհանգամանս:
Եւ վասն մեծի աստուածապաշտութեան Չերոյ
եւ հովուական եռանդանն փոյթ կալնիք, Մե-
ծարգոյ Եղբարք, սիրով եւ հաստատութեամբ
զպաշտօնդ կատարել եւ սկել արթնութեամբ
փրկութեան հաւատացելոց ձերոց, խրատել զնո-
սա եւ զգուշացուցանել, զի ի խոստովանութեան
կաթողիկէ կրօնիցս ցանգ հաստատուն եւ ան-
շարժ կացցեն, զպատուիրանս Տեառն եւ սրբոյ
Նկեղեցւոյ բազում երկիւղածութեամբ պահեա-
ցեն, եւ զնասցեն արժանի Տեառն յամենայն հա-
ճութեան եւ յամենայն գործս բարութեան պրտ-
ղաբերք լինիցին: Յուցնիք մարդասիրութիւն, եւ
հայրական գթով ընկալնիք զնոսա, որք ի մխի-
թարութիւն սրտից Մերոց դառնան ի գիրկս Վա-
թողիկէ Նկեղեցւոյ, եւ յամենայն խնամ կալ-
նիք, զի եռանդեամբ՝ բանիւք հաւատոց անանի-
ցին, եւ պարգեւօք շնորհաց զօրացեալք ի նուի-
րական կոչմանն հաստատուն կացցեն, եւ արագ
ոտիւք ընդ շաւիղս Տեառն ընթացեալք՝ մտցեն ի
ճանապարհն, որ տանի ի կեանս: Եւ առաւել-
եալք ի սէր կրօնիցս, մի խնայեսնիք երբեք ի

ճգունա եւ ի վաստակս, զի մարթաշէք ամե-
նայն բարութեամբ, համբերութեամբ, վարդապե-
տութեամբ, հեղութեամբ եւ քաղցրութեամբ
զմոլորեալսն՝ Քրիստոսի շահել, եւ ի մի նորա
գաւիթն ածել, եւ յաւիտենական ժառանգու-
թեանն յուսոյ առնել զնոսա հաղորդս: Այսպէս
եւ ի վիշտս եւ ի վտանգս, որ ի ժանդագործ ժա-
մանակիս յայսմիկ ի հովուական պաշտամանդ
հասանիցեն ի վերայ Ձեր, յուսացեալք ի շնորհս
Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ցանգ զմտաւ-
ածջիք, թէ որք զբազումս յարդարութիւն խրա-
տիցեն, ծագեացեն իբրեւ զաստեղս յաւիտեանս՝
եւ եւս: Հուսկ ուրեմն, Մեծարգոյ Եղբարք, կա-
միմք՝ զի գիտասջիք ճշմարտիւ, եթէ գութ մեր
եւ խնամք ի վերայ Ձեր, անչափ են ի Տէր: Ամին ի-
րի ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք, գոհու-
թեամբ եւ խոնարհութեամբ սրտի ոչ դադարեմք
ի խնդրելոյ ի Տեառնէ յԱստուծոյ Բարձրելոյ, զի
առատագոյն պարգեւք բարութեան նորա հեղցին
ի վերայ Ձեր գթութեամբ, եւ իջցեն ի վերայ ոչ-
խարաց սիրելեաց՝ Ձեզ հաւատացելոց: Եւ այսր
ամենայնի նշանակ, եւ առհաւատչեայ ջերմա-
գութ սիրոյ մերոյ՝ Ձեզ, Մեծարգոյ Եղբարք, եւ
ամենեցուն կղերականաց եւ ժողովրդոց հաւա-
տացելոց, Ձերոց խնամոցդ յանձն եղելոց, զԱ-
ռաքելական օրհնութիւն ի խորոց սրտէ մտա-
դիւրագոյն շնորհեմք:

Տուեալ ի Հռոմ առ Ս. Պետրոսի յՑ Ա-
պրիլ ամսոյ յամի 1862:

Ի Ալեշտասաներորդում ամի Քահանայա-
պետութեան մերոյ:



4773

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0031762

1014

11.7